

## **Մրցույթ՝ «Բոնցքամարտի հայկական ժառանգությունը» խորագրով**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Երևանում անցկացվելիք բոնցքամարտի Եվրոպայի առաջնությանն ընդառաջ 10-ից 25 տարեկան պատանիների և երիտասարդների համար հայտարարում է մրցույթ՝ **«Բոնցքամարտի հայկական ժառանգությունը»** խորագրով:

Մրցույթի նպատակն է նպաստել բոնցքամարտ մարզաձևում հայ անվանի մարզիկների և նրանց նվաճումների հանրահռչակմանն ու ճանաչելիության բարձրացմանը, հասարակության շրջանում բոնցքամարտ մարզաձևի նկատմամբ հետաքրքրության խթանմանը:

### **Մրցույթի պայմաններն ու կանոններն են.**

- Մայիսի 7-ից 14-ը՝ ժամը 20:00-ին, ԿԳՄՍ նախարարության ֆեյսբուքյան էջում կիրապարակվի հայ բոնցքամարտիկների՝ տարբեր տարիներին գրանցած հաջողությունների վերաբերյալ հարցեր:
- Այն օգտատերը, որն առաջինը կպատասխանի «Ո՞ր բոնցքամարտիկն է և ե՞րբ է նվաճել տիտղոս» հարցին, կճանաչվի «օրվա հաղթող»:
- պատասխանը պետք է գրել հայատառ,
- պետք է գրել ֆեյսբուքյան անձնական էջից,
- արդեն իսկ հրապարակված տարբերակը ենթակա չէ խմբագրման, լրացման, փոփոխման,
- հրապարակված տարբերակի հետ պետք է գրել նաև անուն, ազգանուն, մարզ, քաղաք/գյուղ,
- նշված կանոններին ու պայմաններին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվելու:

Հաղթած մասնակիցները կպարգևատրվեն խրախուսական նվերներով: